ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՍԵՆ ՔԱՐԱՄՅԱՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը՝** Արսեն Ռոբերտի Քարամյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Արաբական Միացյալ Էմիրություններ, Ալ-Մարջան կղզի, 2018 թ. փետրվարի 11-13-ը

4. **Հրավիրող կողմը՝** «Ստարտափ Արմենիա» գիտակրթական հիմնադրամ, «Ռաս Ալ Խայմա» ինկուբատոր և ակսելերատոր

5. **Գործուղման նպատակը՝** Մասնակցություն «Սիսայդ ստարտափ սամիթ 2018» խորագրով գագաթաժողովին

6. **Քննարկված թեմաները՝**

- Հայկական ստարտափ նախագծերի մարտահրավերները և դրանց հետագա զարգացման հեռանկարները,
- Համագործակցությունը ստարտափ ինկուբատորների և ներդրումային կազմակերպությունների հետ՝ հնարավոր ներդրումների ներգրավման նպատակով,
- Ստարտափ նախագծերին պետական աջակցության մեխանիզմները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Տեղի է ունեցել գործնական հանդիպում «Ռաս Ալ Խայմա» ինկուբատոր և ակսելերատորի ղեկավար կազմի հետ, քննարկվել են ստարտափ նախագծերի հետագա զարգացման և համագործակցության հեռանկարները:
Տեղի է ունեցել նաև ոչ ֆորմալ հանդիպում գագաթաժողովի մասնակից հայ երիտասարդների հետ, որի ընթացքում քննարկվել են հայկական ստարտափների գաղափարները, դրանց զարգացման հեռանկարները:
Միջոցառման պաշտոնական փակման արարողության ժամանակ հաղթող թիմերին և մասնակիցներին հանձնվել են մրցանակներ և վկայականներ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը «Ստարտափ Արմենիա» գիտակրթական հիմնադրամի հետ Հայաստանում 2018թ. հուլիսի 22-29-ը անցկացվելիք «Սևան ստարտափ սամիթ» գագաթաժողովի շրջանակներում:

9. **Գործուղվողը՝** Արսեն Ռոբերտի Քարամյան

Ամսաթիվ՝ 15.02.2018թ.